

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 993-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

\_\_\_\_\_ 2023 թվականի N \_\_\_\_\_-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 993-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի «**Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը, ներկայացվող պահանջները և սպանդից գոյացած մթերքի անասնաբուժական դրոշմման կարգը սահմանելու մասին**» N 993-Ն որոշմամբ սահմանված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ գլխով.

### **«Վ. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄՊԱՆԴԻ ՏԱՐԱԾՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

**40.** Բնակավայրերում ժամանակավոր սպանդի տարածքը (շինությունը), որը նախատեսված է փոքրաթիվ (5-7 գլուխ) կենդանիների ամենօրյա սպանդի համար, տեղակայվում է սահմանված կարգով համայնքի ղեկավարի կողմից

հատկացված համապատասխան վայրում:

**41.** Սպանդային տարածքում նախասպանդային և հետսպանդային զննումն իրականացվում է սույն որոշման հավելվածով սահմանված ընթացակարգերով:

**42. Սպանդի տարածքը պետք է ունենա՝**

- բետոնապատ տարածք՝ (ներառյալ նախասպանդային և կարանտինային տարածք)
- թեքություն արյան և ջրի արտահոսքի համար.
- տանիք.
- ցանկապատ՝ ցանկապատված մետաղական ցանցով կամ թիթեղով:

**43. Սպանդային տարածքը պետք է ունենա հետևյալ տեխնոլոգիական հագեցվածությունը՝**

- կենդանու զգայազրկման (շմեցման) և սպանդի հավաքածու՝ կենդանու զգայազրկման սարք և կենդանիների շարժողական ակտիվությունը սահմանափակող սարքավորում (խեկ, խոզ).
- սղոց՝ կրծոսկրը կտրող.
- դանակներ.
- գործիքների ախտագերծման սարք.
- լվացարան.
- կուտակային ջրատաքացուցիչ.
- զննման սեղան՝ անասնաբուժասանիտարական փորձաքննություն անցկացնելու համար
- անասնաբուժասանիտարական փորձաքննության համար նախատեսված միջոցներ.
- ամբարձիչ՝ էլեկտրական.
- նախասպանդային կշեռքներ.
- կշեռք՝ մսեղիքի համար
- ջրի տարա.
- ջրի պոմպ.
- տարա՝ մաքրող լուծույթների համար.
- տարաներ՝ արյան հավաքման, աղիների, կարմիր օրգանների, կաշվի, ստամոքսի.
- կենսաթափոնների հավաքման տարաներ.
- գոմաղբի հավաքման տարա.
- հեղուկների հեռացման համակարգ՝ խողովակ, ընդունիչ տարողություն.
- լվացման և ախտահանման հնարավորություն.
- շարժական պոմպային ախտահանիչ՝ ցողարկող գործիքով.
- թափոնների վնասագերծման և ոչնչացման հնարավորություն.
- սանհանգույց:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

